ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(ԱՌԱՆԴՈՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ)

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏԵԱՆ
akoonk@yahoo.com

Յետխորհրդային Հայաստանի առջեւ ծառացած կարեւոր հիմնախնդիրներից է զանգուածային արտագաղթը՝ ընկերատնտեսական, էթնօժողովրդագրական եւ մշակութային հետեւանքներով: Պատմական հայրենիքը կորցրած եւ բռնագաղթ տեսած հայ ժողովրդի համար արտագաղթի երեւոյթը տագնապայարոյց է եւ մեր օրերում խոր ու համակարգային վերլուծութեան կարիք ունի: Օրէցօր աճող արտագնայ աշխատանքը[1], որպէս Հայաստանից արտագաղթի կարեւոր գործօն, նոր երեւոյթ չէ. այն ուղեկցում է հայ ազգին իր պատմական զարգացման ողջ ընթացքում: Արտագնայ աշխատանքը ժամանակակից հայկական հասարակութիւնում ընդհանուր առմամբ արժեւորւում է որպէս տնտեսական եւ ժողովրդագրական երեւոյթ, իսկ անհատի/ընտանիքի մակարդակով պատշաճ ուշադրութեան չեն արժանանում դրա էթնօմշակութային եւ ընկերային հետեւանքները:

Այս յօդուածում խնդիր է դրուած պարզել, թէ արտագնայ աշխատանքը ի՞նչ ազդեցութիւն է թողնում ներընտանեկան յարաբերութիւնների վրայ, տեղաշարժի հետեւանքով ընտանիքի երկատումը, ընտանիքի անդամների սահմանի տարբեր կողմերում յայտնուելը որքանով են բարձրացնում ամուսնալուծման վտանգը: Անհրաժեշտ է նաեւ պարզել, թէ արտագնայ աշխատանքի մեկնողների մօտ ի՞նչ առանձնայատկութիւններ ունեն ընտանիքի ձեւաւորման կենսափուլերը, եւ դրանք ի՞նչ ազդեցութիւն են թողնում ընտանիքի կայունութեան վրայ: Ուստի այդ տեսանկիւնից ՀՀի համար արդիական է աշխատանք գտնելու հետեւանքով առաջ եկած այդ իրողութիւնների ուսումնասիրութիւնը, իսկ յետագայ կարգաւորման առումով՝ տեսական ու գործնական նոր մօտեցումների մշակումը:

Յօդուածի նպատակն է բացայայտել ընտանիքի վրայ արտագնայ աշխատանքի թողած էթնօմշակութային եւ ընկերային ազդեցութիւնը նախախորհրդային, խորհրդային եւ յետխորհրդային ժամանակաշրջանների լայն համեմատական ենթախորքում:

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ընտանիքի վրայ պանդխտութեան[2] թողած ընկերային հետեւանքների խնդրիրը հայ իրականութեան մէջ պատմական առումով ունեցել է իր առանձնայատուկ դրսեւորումները: Պանդխտութեան թեման լայն քննարկման առարկայ է եղել դեռեւս ԺԹ. դարում: Այն արտացոլուել է հայ միջնադարեան գրականութիւնում, մամուլում եւ ազգագրագէտների հաւաքած նիւթերում: Միքայէլ Նալբանդեանը, դեռեւս իր ժամանակին անդրադառնալով արտագնացութիւն ծնող պատճառներին, նշում էր. «*Աղքատութիւնը*

ստիպում է նորան թողնելու իւր տունը, իւր ընտանիքը, իւր ամուսինը, իւր զաւակները եւ գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատութիւնից ազատուելու համար: Բայց այդ տեղում եւս նորան հանդէպ է դուրս գալիս էապէս նոյն աղքատութիւնը, գուցէ մի փոքր քաղաքային ամոք կերպարներով»[3]:

1890ականներին պանդխտութիւնը ընդունեց մեծ չափեր: «*Արտագնայ զբաղմունքը*,- գրում է Երեւանի նահանգապետը,- *տարէցտարի ընդունում էր աւելի ու աւելի նշանակալի չափեր: 1898 թուականին ... քաղաքներից (Թիֆլիս, Բաքու, Բաթում եւ այլն) աշխատանքի է մեկնել 2000 մարդ»*[4]:

Պանդխտութեան չափերը մեծ էին նաեւ Օսմանեան Թուրքիայի տիրապետութեան ներքոյ գտնուող Արեւմտեան Հայաստանում: Ըստ Ա. Յովհաննիսեանի բերած ոչ-լրիւ տուեալների, 26 տարուայ ընթացքում նրանց թիւն այստեղ աճել էր մօտաւորապէս չորս անգամ[5]: Եթէ 1860ականներին այն կազմում էր 15,000 մարդ, ապա 1886ին միայն Կ. Պոլսում պանդուխտների թիւը հասաւ 50-60,000ի: Միայն 1878ին պանդխտութեան է դիմել Վանի գաւառից 3800, Մուշի գաւառից՝ 1700, Սղերդի գաւառից՝ 5000, Քըղիի գաւառից՝ 300, Բիթլիսի գաւառից՝ 2800, Քեմախի գաւառից՝ 2000, Դերջանի գաւառից՝ 1000 մարդ[6]: Այդ թուականներին, ըստ Ռաֆֆու, պանդուխտների թիւը Պոլսում հասնում էր 45,000ի[7]:

Մշակ, Արծագանգ պարբերականների էջերից տեղեկանում ենք, որ իւրաքանչիւր ընտանիք ունէր մէկ-երկու եւ նոյնիսկ չորս-հինգ պանդուխտ: Մուշի Խաս գիւղից (250 տուն) արտագնացութեան էր մեկնել 300-400 մարդ, Նորաշէնից (200 տուն)՝ 300 մարդ եւն.[8]: Նրանք հիմնականում մեկնում էին Կ.Պոլիս, որտեղ զբաղւում էին ջրկիրութեամբ, բեռնակրութեամբ: Բացի Կ.Պոլսից, աշխատում էին նաեւ Սիրիայի մահուդի ձեռնարկութիւններում, Կեսարիայի կտաւագործական արհեստանոցներում, Ատանայի բամբակի ցանքերում: Ծանր էին նրանց ինչպէս աշխատանքային, այնպէս էլ կեանքի պայմանները: Պանդուխտները գիշերում էին հրապարակներում եւ կեղտոտ իջեւանատներում: Այդ բոլորի հետեւանքով, յաճախ նրանց կեանքն ընդհատւում էր օտար վայրում: Այսպէս, Երուանդ Լալայեանը, բնութագրելով վանեցիներին, նշում է. «*Վանեցու մի իւրայատկութիւնն էլ այն է, որ ագուլեցու նման սիրում է գաղթել, ընտանիքը Վանում գրեթէ անխնամ թողած նա երկար տարիներ դեգերում է Պոլիս, Տրապիզոն, Ամերիկա, Թիֆլիս, Բաքու եւ աշխարհի բոլոր կողմերը»*[9]: Իսկ Մկրտիչ Փորթուգալեանի տուեալներով՝ միայն Պոլսում վանեցի պանդուխտների թիւն այդ շրջանում մօտ 20,000 էր: Ըստ նոյն աղբիւրի՝ միայն Պոլսում մութ ու խոնաւ նկուղներում մեռնող պանդուխտների թիւը հասնում էր 1700ի[10]:

ԺԹ. դարի ազգագրական նիւթերում պանդխտութեան մեկնելու նախապատրաստութեան սովորոյթի, ընտանիքի նկատմամբ պանդուխտի նուիրական ծէսի եւ հրաժեշտի մասին բազմաթիւ տեղեկութիւններ են պահպանուել: Ըստ այդ սովորոյթի՝ մեկնելուց առաջ պանդխտութեան

գնացողը համաձայնութիւն ստանալու նպատակով այդ որոշման մասին յայտնում էր տան մեծին, իսկ յետոյ խնդրում էր մօրը, որ ճանապարհի համար ծիսական կերակուր եւ տաք հագուստներ պատրաստի. «*Մայրիկ, կարաւանի ձին վարձեցի, երեք օրէն ճամփայ պիտի ելնենք, ընկերներս լաւ մարդիկ են, թերեւս աստծոյ տնօրինութիւնն է, որ մենք ուրախ սրտով պատառ մը հաց պիտի չուտենք..., ուստի քանի մը հաց, բաղարջ թխէ, քանի մը գունդ փոխինդ շաղէ, քանի մը կտոր պանիր, քանի մը հատ ծուկ-մուկ, ալ դուք գիտէք, հալուաներ, հագուստներ երեսուն օրուայ ճամփայ է*»[11]: Մեկնելուց առաջ պանդուխտը այցելում է իր այգին, պարտէզը. մաղթում եւ աղերսում է՝ շատ բարիք տալ, որ իր երեխաները կարօտ չմնան, գան քաղեն ու մոռանան հայր կորցնելու վիշտը[12]: Այնուհետեւ համբուրում էր ծնողի ձեռքը, խնդրում մօր օրհնութիւնը եւ նոր միայն ուղեւորւում «աւետեաց երկիր», իսկ կարաւանի ձիերը, զանգակների ղօղանջները կտրում են հարազատների յոյսի վերջին թելը[13]: Պանդխտութեան մեկնողն էլ, հայրենիքում մնացողն էլ գիտակցում էին, որ օտարութեան մէջ աւելի վատթար վիճակ է սպասւում պանդուխտին, որ նա կա՛մ չի վերադառնալու, կամ էլ եթէ վերադառնայ՝ հիւծուած է, աշխատանքի համար ոչ-պիտանի: Հարազատները, հրաժեշտի, կարօտի, տառապանքի, հիւանդութեան, սպասումների հետ կապուած, պանդուխտին նուիրուած «ղարիբի» եւ «անտունի» թեմայով բանաւոր երգեր էին հիւսում՝ պանդուխտի ճակատագրի վերաբերեալ տխրութիւն եւ տագնապ արտայայտելով[14]:

Ղարիբը պառկել ա, անճար կը տնքայ,
Հէր ու մէր չի կայ, որ հոգսը հոգայ,

Մէր չունի, որ տեղը գցի վերցնէ,
Քիր չունի բարձի էրսը դարձնէ,
Եար էլ չունի հալը, խաթրը հարցնէ:
Վայ էն մօրը, որ ղարիբին բերել ա,
Գշերը ծիծ ա տուել, ցերեկը ըրօրել ա,
Ղարիբը երկիրէ երկիր կորել ա,

Քարերը եորղան են, ֆողը դոշակ,
Բարձ ու բալիշ չունի նա իր գլխի տակ:

Ինքը իրա ճամփէն լափ մոլորել ա,
Տասը տարի կայ հեռացել է, կորել,
Օտար երկրներ ա ընկել, կորել,
Ընչանք չմեռնէի, եարս տեսնէի,
Վարթ ու ռեհանի պէս մօտը բանէի[15]:

Պանդխտութեան մեկնողը մեծ ակնկալիք ունէր, որ կը կարողանայ փող վաստակել, ընտանիքի հոգսերը հոգալ, եւ այդ պատճառը նոյնպէս արտացոլուած է պանդխտութեան երգերում.

Էրթամ Ըստամբուլ,
Դատիմ փարա բոլ,

Իմ եարի համար,
Առնեմ ջուխտ մը սոլ[16]:

Այս ժամանակաշրջանի վերաբերեալ ազգագրագէտների հաւաքած դաշտային նիւթերի ուսումնասիրութիւնից պարզւում է, որ պանդխտութիւնը բացասական բարոյահոգեբանական ազդեցութիւն ունեցաւ ընտանիքի եւ ներընտանեկան յարաբերութիւնների վրայ: Համշէնցի հայերի կեանքում, բարոյականութեան մէջ, վարք ու բարքում հետզհետէ տեղի ունեցած փոփոխութիւնների պատճառը նոյնպէս Երուանդ Լալայեանը պայմանա-

տորում է Կովկաս պանդխտելու հանգամանքով. «*Հայրենական պարզ ու նահապետական կեանքի հետ տեղ-տեղ նկատւում է նրանց մէջ ապականութիւն, անբարոյականութիւն, մանաւանդ Չերնոմորի վիճակում, ուր շրջապատող ռուս կազակ գիւղացիների ընտանեկան յայտնի բարքերի ապականութեան շրջանում նահապետական հայը կորցնում է իր բարքերի վաղեմի մաքրութիւնը*»[17]:

Ընտանիքի համար առանձնապէս ծանր հետեւանքներ էին ունենում սեռավարակային հիւանդութիւնները. «*Եւ ահա չանցած մի քանի ամիս՝ վերադառնում է նա տուն՝ դեղնած, նիհարած եւ զանազան վարակիչ հիւանդութիւններով ծանրաբեռնուած, ահա նրա բերածը քաղցած ծնողների եւ մերկ զաւակների համար*»[18]: *Մշակ* թերթի մէկ այլ համարից տեղեկանում ենք, որ Հին Նախիջեւանի գաւառի Կուլիբեկդիզա գիւղն ունէր 40 տուն, բոլորն էլ աղքատ, այդ իսկ պատճառով նրանցից իւրաքանչիւրը Ռուսաստանի քաղաքներում ունէր մէկ կամ երկու պանդուխտ. «*Երբ ծմեռը վրայ է հասնում, եւ երբ խղճուկ գեղջկուհին ամէն բան պատրաստում վերջացնում է, այդ ժամանակ պանդխտութիւնից վերադառնում է նրա կա՛մ ամուսինը, կա՛մ որդին եւ շատ անգամ ամբողջ ծմեռը հարբեցողութեամբ եւ թղթախաղով անցկացնելուց յետոյ՝ գարնանը նորից շտապում է իր սիրած պանդխտավայր: Կան նաեւ այնպիսիները, որ տարիներով չեն վերադառնում, կարծես նրանց յիշողութեան մէջ մեռնում է տուն-տեղ, կին, երեխայ: Բարեբախտաբար, այդպիսիների թիւը սակաւ է*»[19]: Նալբանդեանը, անդրադառնալով այդ խնդրին, որպէս պանդխտութեան պատճառ համարում է սխալ եւ վնասակար այն աւանդոյթը, որը հայ ընտանիքում ժառանգաբար փոխանցւում է հօրից որդուն: Ըստ նրա՝ 10-20 տարի կտրուելով ընտանիքից, նրանց կեանքը երբեմն ընդհատւում է օտարութեան մէջ՝ ընտանիքը թողնելով ծայրայեղ թշուառ վիճակում, կամ վերադառնում է ուժասպառ եւ տարիքն առած՝ համալրելով ընտանիքի աղքատ անդամների թիւը: Բայց այս բոլորը դաս չի լինում նրա որդու համար, որը չափահաս դառնալուց յետոյ բռնում է Պոլիս, Տրապիզոն տանող պանդխտութեան ճանապարհը: Միքանի տարի անց լուր է ստանում, որ իր ծերունի հայրը, ապա եւ մայրը վախճանուել են. «*Լաց, պանդուխտ, բնական զգացողութեամբ չես կարող լաց չլինել, բայց ոչ ոք մեղաւոր չէ, բացի քո հօրից, բացի քեզանից, բացի այն սխալ եւ վնասակար աւանդութիւնից, որ քեզ այդ օրը ձգեց*»[20]: Այս բոլորի փրկութիւնը Նալբանդեանը տեսնում է նախկին վիճակին՝ հողագործութեամբ եւ երկրագործութեամբ զբաղուելու վերադառնալու մէջ[21]: Գարեգին Սրուանձտեանցն իրաւամբ նշում է, որ Նոր Տարուայ տօնին մշեցին չի կարողանում ուրախանալ, քանի որ ընտանիքի երիտասարդը պանդխտութեան մէջ է, իսկ մայրը եւ դեռահաս կինը ծանր հոգեվիճակում են. «*Ի՞նչ կեանք է, որ վարում ենք հայերս, ամուսնացողը իւր ամուսնուց զուրկ, որդին իր ծնողքէն, եղբայրն իր քոյրերէն տարագիր, իբր թէ հոս շահ չունինք կը դիմենք ի Պոլիս եւ ուրիշ քա-*

ղաքներ չարաչար կը ծառայենք, եւ այն տեղերն ալ կերպ ախտից կը մարուինք, վաստակածներս կը փչանայ, կեանքը կ'ոչնչանայ»[22]:

Ըստ Լալայեանի վկայութեան՝ Վարանդայի գաւառի համար պանդխտութիւնն ունեցել է բարոյահոգեբանական լուրջ հետեւանքներ. «*Նախ՝ պանդխտութիւնը, որը սաստիկ տարածուած է գաւառի բնակչութեան մէջ: Գլխաւորապէս պանդխտում են Բաքու, Ղազախ, Պետրովսկ եւ անդրկովկասեան երկրներ: Վարանդացուն տակաւին նոր ծանօթ այդ երկրները, մանաւանդ Բաքուն իր նաւթահորերով, գրաւել եւ գերել է իրեն: Օտար երկրների հարստութիւնից շլացած վարանդացին ծախում է իր եզն ու գոմէշը, այգին ու արտը եւ դիմում հարստութեան ու ախտերի բոյները: Տարիներով նա քայքայւում է այնտեղ՝ երեսի վրայ թողնելով ջահել կնոջն ու երեխաներին: Նա գրաււում է օտար աշխարհի զեխ կեանքով, ընկնում այդ հոսանքի մէջ եւ վերջ ի վերջոյ կա՛մ կուլ է գնում, կա՛մ թէ չոր կմախք դարձած ու զանազան ախտերով վարակուած տուն դառնում»*[23]: Այդ պայմաններում կինը տարիներով սպասում է իր ամուսնուն եւ չի ուզում դաւաճանել նրան, որի հետ կապել է իր բախտը, պատիւն ու կեանքը. «*Սակայն բնութեան այս թոյլ արարածը երկար չի կարողանում դիմանալ: Շարունակ լուրեր է լսում, իբր թէ իր ամուսինը օտար կին է պահում եւ մտադիր չէ տուն վերադառնալ կամ թէ թղթախաղով եւ հարբեցողութեամբ վատնում է իր վերջին կոպէկը: Այս տեսակ աննպաստ լուրերը, ամուսնու անտարբերութիւնը դէպի ընտանիքը, քաղցը եւ վերջապէս կրքերը դուրս են հանում կնոջը իր առագաստից եւ ձգում փողոց»*[24]:

Պանդուխտները, աշխատելով խոշոր քաղաքներում, գիւղական կենցաղ էին ներմուծում քաղաքային մշակոյթի մի շարք տարրեր. դրանք առաջին հերթին դրսեւորւում էին տան յարդարանքում, հագուստում, ազատ ժամանակի կազմակերպման ձեւերում: Արտագնացութեան հետեւանքով գիւղերում սկսեցին կառուցել քաղաքային տիպի լուսաւոր եւ բարձր տներ: Բազմազգ ընկերութիւններում նրանց շփումները տարբեր ազգութիւնների մարդկանց հետ նպաստեցին նրանց հասարակական-քաղաքական հայեացքների ձեւաւորմանը, արժէքային համակարգի փոփոխութեանը. «*Գերդաստանի անդամներից մի քանիսը գաղթում են քաղաքներում աշխատելու,*- գրում է Լալայեանը,- *ընդունում են այնտեղի գաղափարներն ու սովորոյթները: Իրենց վաստակը ամբողջովին տան մեծին չեն ուղարկում, շատ անգամ ցանկանում են կնոջն իրենց մօտ տանել, իրենց երեխային ուսման տալ...*»[25]: Ըստ Լալայեանի՝ պանդխտութիւնը ազդում էր նաեւ նրանց կենցաղամշակութային ոլորտի վրայ: Այդ առումով նա բերում է Ալաստան գիւղի (Ջաւախքի պատմաազգագրական շրջան) բնակիչների օրինակը. «*Ալաստանի բնակիչները մինչեւ վերջին ժամանակներս գնում են Կ. Պոլիս աշխատելու եւ այս պատճառով միւս գիւղացիներից աւելի զարգացած եւ կրթուած են: Տները փայլում են վերին աստիճանի մաքրութեամբ*»[26]: Ըստ Լալայեանի՝ պանդխտութիւնը նպաստեց նաեւ նահապե-

տական գերդաստանի քայքայմանը եւ առանձին փոքր ընտանիքների ձեւաւորմանը: Մեկնելով մեծ ու բազմամարդ քաղաքներ, տեսնելով այնտեղի նիստուկացը, ծնողների հետ քաղաքի երիտասարդների ազատ վերաբերմունքը՝ «*պանդուխտ գաւառեցին եւս նոյն համարձակութիւնը կ'ուզէ մտցնել իր դռնից ներս, կը տեսնէ, որ քաղաքացին հարուստ է, իր աշխատած գումարների մեծ մասը կը ծածկէ ծնողներից՝ առանձին դրամագլուխ շահեցնելու համար*»[27]:

ԱՐՏԱԳՆԱՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանում 1920ին խորհրդային կարգերի հաստատումը, տնտեսական եւ հասարակական-քաղաքական յարաբերութիւններում տեղի ունեցած փոփոխութիւններն իրենց ազդեցութիւնը թողեցին բնակչութեան տեղաշարժերի բնոյթի, բովանդակութեան, դրսեւորման ձեւերի եւ միտումների վրայ: Խորհրդային Միութեան կազմում ընդգրկուելուց յետոյ նրա բնակչութեան արտաքին աշխատանքային տեղաշարժերի պատմութիւնը դարձաւ խորհրդային ժողովրդի պատմութեան մի մասը: Փոխուեց նաեւ Հայաստանի բնակչութեան արտաքին աշխատանքային տեղաշարժերի ուղղութիւնը. հիմնականում մեկնում էին խորհրդային հանրապետութիւններ[28]: Գործազրկութեան պատճառով Հայաստանի բոլոր շրջաններից, ոչ-լրիւ տուեալներով, 1925ին արտագնացութեան է մեկնել 23,658 մարդ[29]: Արտագնացութեան թափը շարունակում է բարձր մնալ լեռնային եւ նախալեռնային շրջաններում: Ծայրայեղ սակաւահողութեան պատճառով նրանք կրկին մեկնում էին արդիւնաբերական կենտրոններ՝ աշխատանք փնտռելու[30]: Արտագնացութեան թափը մեծ էր Հայաստանում նաեւ 1926ին՝ մօտաւորապէս 65,000 մարդ, որից 30,000ն այդ տարի արտագնացութեան էր մեկնել, մեծ մասամբ Բաքու եւ Թիֆլիս[31]: Այդպիսի հոսքերի պայմաններում հաւաքական տնտեսութեան ղեկավար մարմինները ձեռնարկում էին մի շարք արհեստական միջոցառումներ՝ նրանց տեղաշարժերը սահմանափակելու համար: Մասնաւորապէս, նրանք արտագնացներին հեռացնում էին հաւաքական տնտեսութիւնից, անասուններին չէին թողնում արօտավայրերը, նրանց ընտանիքի անդամներին չէին ընդունում հաւաքական տնտեսութեան մէջ, արտագնացներին համարում էին դասալիքներ եւն.[32]: Այդ խնդիրը լուծելու նպատակով կառավարութիւնը գաղթի գործընթացների ղեկավարման համար կիրառեց վարչական մօտեցում՝ արտագնացների շրջանում իրականացնելով կազմակերպուած ձեւով որակեալ անձնակազմի անդամի հաւաքագրում: Իհարկէ, այդ ընթացքում չէր բացառւում նաեւ արտագնացութեան տարերային ձեւը: Դրա համար ԽՍՀՄ Կենտգործկոմը եւ Ժողտնտխորհը 1930ին ընդունում են «Արտագնայ Արհեստների Եւ Սեզոնային Աշխատանքների Արգելքների Վերացման Գիւղացիների Ազատ Տեղաշարժերի Մասին» որոշումը, որով

նախատեսում էին արտագնացների նկատմամբ արհեստական արգելքների վերացում եւ ազատ արտագնացութեան պայմանների ստեղծում[33]: Անշուշտ, այդ որոշումները մեծ խթան հանդիսացան զանգուածային արտագնացութեան համար եւ յանգեցրին գիւղից քաղաք բնակչութեան գաղթի չափերի աւելացմանը. «*Արտագնացութեան վերաբերեալ կառավարութեան այդ կարեւոր որոշումը*,- գրում է Եուրի Յարութիւնեանը,- *նշանակալի ազդեցութիւն ունեցաւ գիւղից քաղաք կատարուող զանգուածային տեղաշարժերի համար*»[34]:

Հայրենական մեծ պատերազմի պատճառով, բնականաբար, արտագնացութեան գործընթացն ընդհատուեց: Այն Հայաստանում հետզհետէ աշխուժացաւ 1950-60ականներին՝ կապուած պատերազմից յետոյ երկրի ժողովրդական տնտեսութեան վերականգնման, ինչպէս նաեւ Ղազախստանի, Սիպիրի, Ուրալի, Պովոլժիէի շրջանների եւ, մասնաւորապէս, Հիւսիսային Կովկասի շրջաններում խամ ու խոպան հողերի իւրացման հետ, որին աշխուժ մասնակցութիւն ցուցաբերեց խորհրդային ողջ ժողովուրդը: Այդ նպատակով ՍՍՀՄ նախարարների խորհուրդը եւ ՍՄԿԿ Կենտկոմը խնդիր դրեց վերը նշուած շրջաններում խամ ու խոպան հողերի իւրացման հաշուին 1954-55ին հացահատիկային մշակաբոյսերի ցանքերի ընդլայնման միջոցով աւելացնել հացահատիկի արտադրութիւնը: Դրա իրականացման համար կուսակցական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպութիւնները պարտաւոր էին գիւղական մեքենագէտների, մասնագէտների եւ գիւղատնտեսական ղեկավար անձնակազմի անդամների շրջանում բացատրական աշխատանքներ տանել կամաւորների թիւն աւելացնելու նպատակով[35]: Այդ գործընթացից անմասն չմնաց նաեւ Հայաստանը, որտեղից կազմակերպուած հաւաքների միջոցով մի շարք որակեալ մեքենագէտներ եւ մասնագէտներ մեկնեցին աշխատելու: Այն, արտագնացութեան զարգացման նոր փուլ էր նշանատրում, որի համար պետութիւնը կիրառեց գաղթի կառավարման վարչահրամայական մօտեցում՝ ընդհուպ որոշ ընտանիքների վերաբնակեցում այդ շրջաններում: Այդ մօտեցումը յանգեցրեց եղանակային արտագնայ աշխատանքի չափերի ընդլայնման: Սակայն դրա հետեւանքով յատկապէս Սիպիրում եւ Ղազախստանում թոյլ տրուեցին մի շարք խախտումներ աշխատավարձի եւ աշխատանքի ընդունման գործող կարգի վերաբերեալ, որը պատճառ դարձաւ նախկին որոշումների վերանայման: Այդ իսկ պատճառով ԽՍՀՄ նախարարների խորհուրդը, անդրադառնալով դրան, 1973 Յունիսի 19ին ընդունեց «Կոլտնտեսականների Սեզոնային Աշխատանքի Մեկնելու Կարգի Մասին» որոշումը՝ յանձնարարելով հանրապետութիւնների նախարարների խորհուրդներին, երկրամասային եւ շրջանային գործադիր կոմիտէներին խիստ հսկողութիւն սահմանել արտագնացութեան վերաբերեալ գոյութիւն ունեցող որոշումների իրագործման նկատմամբ[36]: Այդուհանդերձ, խորհրդային կառավարութիւնը նման որոշումներով չկա-

ողացաւ կարգաւորել այդ գործընթացը, քանի որ տարէցտարի ընդլայնւում էին արտագնացութեան չափերը, որին մասնակցում էին տարբեր ազգութիւնների պատկանող մարդիկ: Ըստ ՀԽՍՀ Կենտրոնական Վիճակագրական Վարչութեան տուեալների՝ 1983ի դրութեամբ 3,218,400 բնակիչ ունեցող Հայաստանից գաղթողների թիւը եղել է 24,931 մարդ, կամ գաղթողների տեսակարար կշիռը Հայաստանի բնակչութեան ընդհանուր քանակի մեջ կազմում էր 0.8%[37]: Այդ փուլում արտագնացութեան թողած ազդեցութիւնն ակնյայտօրէն դրսեւորւում էր ընտանիքի, դրա կառուցուածքի եւ ներընտանեկան յարաբերութիւնների վրայ: Արտագնացութեան հետեւանքով տան գլխաւորի տեւական բացակայութիւնը եւ տարուայ ընթացքում ամուսինների ընդամէնը երեք-չորս ամսուայ համատեղ կեանքն իրենց բացասական ազդեցութիւնն էին թողնում ընտանիքի ընկերահոգեբանական մթնոլորտի վրայ եւ դառնում լուրջ գործօն՝ ընտանիքի հիմքերի ամրութեան քայքայման: Բնակչութեան շրջանում հետզհետէ աճում էր ամուսնալուծութիւնների եւ անկայուն ընտանիքների թիւը: Այսպէս, 1984ի Երեւանի եւ Գիւմրու, իսկ 1984-86ին Տաշիրի եւ Գաւառի ժողդատարաններից վերցրած ապահարզանների փաստաթղթերից պարզ է դառնում, որ ամուսնալուծութիւնների որոշ մասը կապուած էր աշխատանքային գաղթի հետ: Այդ առումով նրանք յաճախ են նշել հետեւեալ պատճառները.- առաջին՝ «ամուսինը այնտեղ (խոպանում – Մ.Գ.) նոր ընտանիք է կազմել, ուզում է բաժանուել, որ ծեւակերպի նոր ամուսնութիւնը», երկրորդ՝ «կինը» (ռուս) չի համակերպուել տեղի պայմաններին, վերադարձել է հարազատ վայր»: Նման գործերը ամբողջ ամուսնալուծութիւնների թւում Երեւան քաղաքում կազմել էին 1.5%, Գիւմրիում՝ 18.8%, Գաւառում՝ 8.5%: Ամուսնալուծութիւնները առաւել տարածուած էին երիտասարդ (18-29) տարիքային խմբում՝ պայմանաւորուած նաեւ ընտանիքի կազմաւորման փուլում նրանց տեւական բացակայութեամբ: Միջին եւ աւագ տարիքի արտագնացները այդ քայլին են դիմել երեխաների չափահաս դառնալուց յետոյ: Բախուելով այդ երեւոյթի հետ՝ արտագնացների ընտանիքի անդամները յաճախ էին տալիս հետեւեալ պատասխանները. «*Հաւանութիւն չեմ տալիս արտագնացութեանը, քանի որ նա ինչպէս երիտասարդ ընտանիքների, այնպէս էլ երեխաների դաստիարակութեան գործում յանգեցնում է մի շարք բացասական հետեւանքների*» (կին, 40 տ., գ. Երանոս)[38]: «*Երեւոյթն ունի վատ կողմեր: Տեղում աշխատանքի բացակայութեան եւ ցածր աշխատավարձի պատճառով ստիպուած երկար ժամանակ կտրւում ենք ընտանիքից, որը շատ դէպքերում բացասաբար է անդրադառնում ներընտանեկան յարաբերութիւնների վրայ*» (տղամարդ, 51 տ., գ. Վարդենիկ)[39]:

Հայաստանի տարբեր շրջաններում այդպիսի վարքագիծ ունեցող արտագնացների մասին ստեղծւում էին կատակերգեր, որոնք կատարւում էին հարսանիքների եւ այլ միջոցառումների ժամանակ: Բերենք մի օրի-

նակ, որը լայն տարածում էր գտել Գեղարքունիքի մարզում.

Առ կալոշիս թայը, պախա քեզի յիշատակ,
Գարուն եկաւ, խոպանա կ'երթամ,
Կարողա ի գամ, կարողա չի գամ, Եղսօ ջան:
Գացի խոպան մէկ խատ էր,
Էկա տեսայ՝ երկու խատ էր,
Էս ինչ ես արել, փափախ ես արել,
Փափախ ես արել, Եղսօ ջան:
Երբ որ ճժեր ջոչնան,
Կարողա ընձի չճանչնան,
Կալոշիս թայը ցոյց կը տաս,
Նրանք ինձի կը ճանչնան[40]*:*

Այս կատակերգը, որը իւրօրինակ երկխօսութիւն է ամուսինների միջեւ, վկայում է նման ընտանիքներում տիրող ընկերաբարոյական մթնոլորտի մասին:

Արտագնացի երկարատեւ բացակայութեան ընթացքում ընտանիքի ամբողջ հոգսը մի կողմից էլ ընկնում էր կնոջ ուսերին՝ միաժամանակ մտահոգուելով նաեւ ամուսնու ճակատագրով եւ առողջական վիճակով: Նիւթերի վերլուծութիւնից պարզւում է, որ արտագնացութիւնը բացասաբար է անդրադառնում նաեւ երեխաների դաստիարակութեան գործի վրայ: Ինչպէս յայտնի է, երեխայի ընկերային զարգացումը ծնողներից պահանջում է հսկայական ֆիզիկական եւ բարոյական ուժեր: Ճիշտ է, դրան նպաստում էին նաեւ գիւղական բնակչութեան շրջանում դեռեւս պահպանուող դաստիարակութեան աւանդական համակարգը եւ ազգակիցների աջակցութիւնը, սակայն ընտանիքից արտագնացի բացակայութիւնը, ինչպէս նաեւ մօր համար ազատ ժամանակի պակասն իրենց հետքն էին թողնում երեխաների դաստիարակութեան կազմակերպման խնդրի վրայ: Երեխաները, յաճախ դուրս մնալով ծնողների անմիջական հսկողութիւնից, ճիշտ չէին դասաւորում կեանքի յետագայ ընթացքը. «*Խորհրդային շրջանում մինչեւ 7րդ դասարանը դպրոցում ես լաւ էի սովորում, բայց երբ հայրս մեկնեց Ռուսաստան արտագնայ աշխատանքի, իսկ մայրս հեթափոխով աշխատում էր գործարանում, սկսեցի դասերին ուշադրութիւն չդարձնել եւ յաճախակի բացակայել: Ութերորդ դասարանը մի կերպ աւարտելուց յետոյ դպրոցից դուրս եկայ եւ ընդունուեցի արհեստագործական ուսումնարան: Հիմա շատ եմ ափսոսում, եթէ ծնողներս ինձ հետեւէին ես էլ մեր դասարանի տղաների նման բարձրագոյն կրթութիւն կը ստանայի*» (տղամարդ, 52 տ., գ. Լիճք)[41]:

Տարբեր շրջանների դպրոցների տնօրէնների հետ անցկացուած հարցումներից պարզուել է, որ բարձր դասարանցիների որոշ մասը, յաճախ լքելով դասերը, հարազատների կամ ծնողների հետ մեկնում է արտագնացութեան, իսկ նրանց որոշ մասն էլ դպրոցն աւարտելուց յետոյ ընդհանրապէս բռնում է արտագնացութեան ճանապարհը: Երեխաների խաթարուած դաստիարակութեանն է վերաբերում Շիրակի ազգագրական մարզում գրի առնուած հետեւեալ կատակերգը.

Որոշեցինք գնալ խոպան
Ես այնտեղ, կինս՝ այստեղ,
Երեխաները մնացին մէջտեղ,
Ոչ բարով գնացինք խոպան[42]*:*

Խորհրդային շրջանում արտագնացութեան թողած բացասական հետեւանքներից էին նաեւ մի շարք հիւանդութիւնների ձեռքբերումը: Դրա վերաբերեալ Մ. Շաբանովան նշում է «.... *հարցուողների միայն 5%ն է, որ աշխատանքից յետոյ յոգնածութիւն չի զգացել, 18%ը քիչ է յոգնել, մեծ մասը իր յոգնածութիւնը գնահատել է շատ բարձր կամ սահմանային (54%), 23%ը նոյնիսկ ընթրել չի կարողացել*»[43]: Բացի գերյոգնածութիւնից բժիշկների վկայութեամբ իւրաքանչիւր 6 արտագնացը տառապում էր կամ պարանոցի, կամ ստամոքսի ցաւերով, կամ յօդացաւերով: Տարածուած էին նաեւ այլ հիւանդութիւններ, որոնք յաճախ ճակատագրական են դառնում ընտանիքի համար[44]:

ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Յետխորհրդային շրջանում Հայաստանի բնակչութեան տեղաշարժերը կրեց զանգուածային բնոյթ. մասնակիցների թիւը տարբեր տարիների ցուցանիշներով տարեկան միջին հաշուով կազմում է 40-50,000 մարդ[45]: Ըստ տարիքային կազմի՝ նրանց 39.7%ը պատկանում է 30-49, 32.7%ը՝ 50 եւ բարձր, իսկ 27.6%ը՝ 18-29 տարիքային խմբերին (գծապատկեր 1): Այսինքն՝ նրանց 60.3%ը գործունեայ աշխատունակ տարիքում է, եւ այդ աշխատուժն իրացնում է ՀՀից դուրս: Հետազօտութեան արդիւնքներից պարզւում է, որ 95.4% ընտանիքներում աշխատանքային գաղթին մասնակցում են տղամարդիկ, իսկ 4.6% տնտեսութիւններում՝ կանայք:

Գծապատկեր 1.- Աշխատանքային արտագնացների տարիքային կազմը (%)[46]



«Որո՞նք են արտագնայ աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցին մասնակիցների գերակշռող մասը մատնանշել է աշխատանքի բացակայութեան կամ ցածր աշխատավարձի հիմնախնդիրը: Ըստ աղիւսակ 1ի՝ արտերկրում աշխատելու պատճառները պայմանաւորող կարեւոր գործօններից է նաեւ ընտանիքի համար լրացուցիչ ծախսերի կամ ներդրումների համար անհրաժեշտ գումարի ձեռքբերումը: Այդ մօտեցմամբ նրանք առաջնային են համարում ընտանիքի կենսապահովման գործառոյթը: Ընտանիքի տնտեսական ապահովման գործառոյթը

կարեւոր ազդեցութիւն է ունեցել ոչ միայն նախախորհրդային եւ խորհրդային, այլեւ յետխորհրդային շրջանի աշխատանքային գաղթականների վարքագծի ձեւաւորման գործում: Այսպէս, յետխորհրդային շրջանի աշխատանքային գաղթականների 14.6%ը ծրագրել է դրսում գումար վաստակել տան կառուցման/գնման, 13.0%ը՝ ամուսնութեան/հարսանիքի եւ այլ արարողութիւնների, 5.9%ը՝ երկարատեւ օգտագործման ապրանքներ (ինքնաշարժ, կահոյք եւն.) ձեռք բերելու համար:

Աղիւսակ 1.- Աշխատանքային գաղթի դրդապատճառները յետխորհրդային Հայաստանի գիւղական եւ քաղաքային բնակչութեան շրջանում (%)

Պատասխաններ	Գիւղ	Քաղաք	Միջին
Տեղում աշխատանքի բացակայութիւնը	30.7	32.8	31.7
Ցածր աշխատավարձը, որը չէր բաւականացնում բնականոն ապրելու համար	14.9	16.0	15.5
Գումար էր անհրաժեշտ տան կառուցման/գնման/վերանորոգման համար	17.0	12.3	14.6
Գումար էր անհրաժեշտ ամուսնութեան/հարսանիքի եւ այլ արարողութիւնների համար	16.6	9.5	13.0
Մասնագիտութեամբ աշխատատեղերի բացակայութիւնը	6.4	10.7	8.6
Գումար էր անհրաժեշտ երկարատեւ օգտագործման իրեր ձեռք բերելու համար/ինքնաշարժ, կահոյք եւն.	4.0	7.8	5.9
Իրական անպաշտպանուածութիւնը	2.7	3.1	2.9
Գործարարութեամբ զբաղուելու համար պայմանների բացակայութիւնը	3.1	2.0	2.6
Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայութիւնը	2.3	2.8	2.6
Գումար էր անհրաժեշտ արտադրութեան միջոցներ ձեռք բերելու համար	1.6	2.6	2.1
Այլ	0.7	0.4	0.5
Ընդ.	100,0	100.0	100.0

Հետազօտութիւնից պարզուեց, որ ՀՀից հայ արտագնացների 94.1%ը աշխատանքի է մեկնել Ռուսաստանի Դաշնութիւն, եւ գաղթականի համար այն դեռեւս համարւում է ամենագրաւիչ երկիրը (աղիւսակ 2): Համեմատութեան համար նշենք, որ, ըստ ՀՀ Ազգային Վիճակագրական Կոմիտէի տուեալների, 2018ի դրութեամբ գաղթականների 89.9%ը աշխատելու նպատակով գտնուել է ՌԴում[47]: Բոլոր նախորդ հետազօտութիւնները նոյնպէս վկայում են, որ ՌԴն միշտ էլ եղել է ՀՀից աշխատանքային գաղթի հիմնական ուղղութիւնը[48]:

ՌԴ մեկնելու կարեւոր խթան են նաեւ այդ երկրի մասին համեմատաբար բարձր տեղեկացուածութիւնը, վիզային պահանջների

բացակայութիւնը, լեզուական արգելքների յաղթահարումը: Մեր կարծիքով, այդ գործընթացին նպաստում է նաեւ ՌԴում մեծաթիւ հայկական համայնքի առկայութիւնը, որը, ըստ ՌԴ 2010ի պաշտօնական մարդահամարի տուեալների, կազմել է 1,182,338 մարդ[49], իսկ ոչ-պաշտօնական տուեալների համաձայն՝ գրեթէ երկու անգամ աւելի:

Աղիւսակ 2.- Երկրները, որտեղ մեկնել են ՀՀ արտագնայ աշխատողները (%)		
Երկրները	**Հայեր**	**Հայաստանաբնակ ազգային փոքրամասնութիւններ**
ՌԴ	94.1	67.4
Ուկրաինա	1.6	5.3
Ղազախստան	1.7	3.3
ԱՊՀ այլ երկրներ	0.3	1.0
Արեւմտեան Եւրոպա	2.0	22.0
Այլ երկրներ	0.3	1.0
Ընդամէնը	100.0	100.0

Վիճակագրական տուեալների վերլուծութիւնից պարզուեց, որ ՀՀից ՌԴ աշխատանքային գաղթի այդպիսի մեծ չափերը պայմանաւորուած են նաեւ աշխատաշուկայում ազատ աշխատատեղերի առկայութեամբ: Նշենք նաեւ, որ 1990ականներից յետոյ ընդլայնուել են արտագնացութեան մեկնողների աշխարհագրական սահմանները: Այսպէս, բացի ԱՊՀից, նրանց 2.0%ը աշխատանքի է մեկնել Լեհաստան, Հոլանդիա, Բելգիա, Իսպանիա, ԱՄՆ, Գերմանիա, Յունաստան, Ֆրանսիա (աղիւսակ 2): Աշխատանք գտնելու նպատակով երկար ժամանակով կամ տարուայ մի մասը գտնուելով հանրապետութիւնից դուրս՝ ընտանիքներից հեռու, դրա հետեւանքով այդ ընտանիքները կիսւում են, որը առաջ է բերում ընկերահոգեբանական մի շարք լուրջ խնդիրներ:

Ըստ գծապատկեր 2ի տուեալների՝ հարցուածների 89.4%ը համաձայն է այն կարծիքին, որ արտագնայ աշխատանքի հետեւանքով այդ ընտանիքներում տուժում են ամուսին-կին յարաբերութիւնները, 87.7%ը՝ աւելանում է ամուսնալուծուողների թիւը, 87.2%ը՝ տուժում է երեխաների դաստիարակութեան գործը, 72.4%ը՝ տուժում են արտագնայ աշխատանքի մեկնողի բարոյական արժէքները (գծապատկեր 2): Մեր կողմից տրուած «Ըստ Ձեզ, որո՞նք են ամուսնալուծութիւնների պատճառները» հարցին գաղթական ունեցող ընտանիքների 5.6%ը, որպէս պատճառ՝ համարել է արտագնայ աշխատանքը: Գաղթական չունեցող ընտանիքներում այն կազմել է աւելի ցածր տոկոս (3.9%) (աղիւսակ 3): Համեմատութեան համար նշենք, որ, ըստ ՀՀ ԱՎԿի, 2017ի տուեալների 1000 բնակչի հաշուով ՀՀում ամուսնալուծութիւնները կազմել են 1.3%[50]: Ամուսնալուծութիւնների միւս պատճառների մասին կարծիքները գաղթական ունեցող եւ չունեցող ընտանիքներում ներկայացուած է աղիւսակ 3ում:

Գծապատկեր 2.- Արտագնայ աշխատանքի բացասական ազդեցութեան մասին դիրքորոշումները



Հետազօտութիւնը ցոյց տուեց, որ արտագնայ ունեցող ընտանիքների ձեւաւորման կենսափուլերը, ի տարբերութիւն չունեցողների, ունեն որոշակի առանձնայատկութիւններ, որն էլ դառնում է ամուսնալուծութեան կարեւոր պատճառներից մէկը: Արտագնացութեամբ պայմանաւորուած՝ ընտանիքի կենսափուլերի բնականոն յաջորդականութիւնը, այն է՝ միջամուսնական շրջան կամ ծանօթութիւն, ամուսնութիւն եւ զոյգերի փոխադարձ յարմարեցում, երեխաների ծնունդ, դաստիարակութիւն եւ նրանց նախապատրաստում ինքնուրոյն կեանքին, ամուսնալուծութիւն կամ ամուսնութեան դադարեցում[51], նրանց մօտ խախտւում է: Այդ փուլերից իւրաքանչիւրն իր տեւողութեամբ եւ բովանդակութեամբ ընտանիքի ամրութեան տեսանկիւնից առանձնանում է աշխատանքային գաղթականների շրջանում: Աղիւսակ 4ում բերուած տուեալներից կարող ենք եզրակացնել, որ 18-29 տարեկան երիտասարդ գաղթականների 14.3%ը կնոջ/ամուսնու հետ մինչեւ ամուսնութիւնը ծանօթ չի եղել կամ ծանօթ է եղել ընդամէնը մէկ շաբաթ, եւ այդ ցուցանիշը մօտ երկուսուկէս անգամ աւելի է՝ չգաղթած երիտասարդների համեմատութեամբ (6,3%):

Մինչամուսնական շրջանի կարճատեւութիւնը յանգեցնում է նրան, որ զուգընկերները միմեանց մասին ունենում են անբաւարար տեղեկատուութիւն, սահմանափակ զգացական շփումներ, միմեանց լաւ չեն ճանաչում եւ հասկանում: Զուգընկերոջ հետ կարճատեւ ծանօթ լինելու բացը արտագնացների շրջանում լրացւում է միջնորդութեամբ ամուսնանալու երեւոյթով: Այդ հանգամանքը տարածուած է ինչպէս ՀՀում

բնակուող եւ պարբերաբար արտագնայ աշխատանքի մեկնող, այնպէս էլ դրա հետեւանքով ՌԴում բնակութիւն հաստատած երիտասարդների շրջանում: Հետազօտութեան արդիւնքներով՝ նման ընտանիքներում յետագայում երբեմն գրանցուել են նաեւ ամուսնալուծութիւններ: Որպէս ամուսնալուծութեան պատճառ՝ հարցուողները նման ընտանիքների համար յաճախ նշում էին «*կոնֆլիկտները* եւ միմեանց չհասկանալու», «նոր միջավայրին աղջկայ չյարմարուելու», «աղջկայ եւ տղայի միջեւ տարիքային մեծ տարբերութեան», «Ռուսաստանում տղայի ամուսնալուծուած լինելու» հանգամանքները: Արտագնացների շրջանում տարածուած են նաեւ կարծական կապի միջոցով ծանօթութիւնները[52]:

Ինչպէս բոլոր, այնպէս էլ աշխատանքային արտագնացների ընտանիքներում կարեւոր իրադարձութիւն է ընտանիքի սկզբնաւորումը: Դրանով փոխւում է նրանց ընկերային կարգավիճակը: Արտագնացները ձեռք են բերում ամուսնու, ծնողի նոր կարգավիճակ եւ ինքնաբերաբար պէտք է կատարեն համապատասխան դերեր: Ամուսնութիւնից անմիջապէս յետոյ նրանք հանրապետութիւնից մեկնում են արտագնայ աշխատանքի, որի հետեւանքով նրանց ներընտանեկան ամուսնական (ամուսին եւ կին), ծնողական (հայր եւ մայր) եւ երեխաների դաստիարակութեան եւ ընկերային զարգացման հետ կապուած դերերը խաթարւում են:

Ըստ գծապատկեր 3ի տուեալների՝ արտագնացների 11.6%ը աշխատանքային գաղթի է մեկնել ամուսնանալուց 1-2 ամիս, իսկ 9.1%ը՝ 3-6 ամիս յետոյ: Անշուշտ, ամուսնութիւնից յետոյ այդպիսի կարճ ժամկէտերում ընտանիքից ամուսնու բացակայութիւնը խաթարում է ամուսինների համատեղ կեանքի կշռոյթը, զուգընկերոջը եւ ընտանեկան կեանքին յարմարուելու կարողութիւնները եւ հմտութիւնները: Խորացուած հարցազրոյցի ընթացքում արտագնացները կամ նրանց ընտանիքի անդամները պատմել են բազմաթիւ դէպքեր, երբ արտագնան նշանուած կամ ամուսնութիւնից միքանի օր յետոյ, կամ յղի կնոջը թողած մեկնել է արտագնայ աշխատանքի: Սա երբեմն ներընտանեկան յարաբերութիւններում վէճերի պատճառ է դառնում:

Ինչպէս բոլոր, այնպէս էլ արտագնացների ընտանիքներում ամենալարուած եւ յագեցած շրջանը համարւում է երեխայի ծնունդը: Կենսական այս փուլերի ժամանակ տեղի են ունենում ընտանիքի անդամների դերերի զգալի փոփոխութիւններ, որոշ դերեր վերանում են, առաջանում են նոր դերեր: Սակայն հետազօտութեան արդիւնքները ցոյց են տալիս, որ պարբերաբար բացակայութեան հետեւանքով գաղթականներն աւելի քիչ դերակատարում են ունենում երեխաների ընկերային զարգացման գործընթացներում:

Աղիւսակ 3.- Ամուսնալուծութիւնների պատճառները (%)		
Պատճառները	Արտագնայ	Արտագնայ

	ունեցող ընտանիք	չունեցող ընտանիք
Նախասիրությունների տարբերությունը	21,4	29,8
Վատ բնաւորությունը	28,6	22,9
Ֆինանսական պայմանները, գործազրկությունը	46,0	53,9
Անուշադրությունն ընտանիքի նկատմամբ	7,1	10,1
Բնակարանային, կենցաղային պայմանները	5,6	9,7
Երեխայ չունենալը	19,8	17,1
Խանդը	20,6	16,3
Սիրոյ, յարգանքի բացակայությունը	20,6	20,9
Ամուսնու անհաւատարմությունը	39,7	39,1
Կնոջ անհաւատարմությունը	41,3	38,8
Սեռական կեանքում ամուսինների անհամատեղելիությունը	0,8	4,7
Ամուսնու ծնողների միջամտությունը զոյգերի կեանքին	2,4	8,1
Կնոջ ծնողների միջամտությունը զոյգերի կեանքին	2,4	7,4
Արտագնայ աշխատանքը	5,6	3,9
Ալկոհոլի չարաշահումը	10,3	12,8
Կնոջ անհնազանդությունը	1,6	1,6
Հիւանդությունը	2,4	1,2
Իրար չզիջելը, իրար չհասկանալը, անհանդուրժողությունը, համբերատար չլինելը	2,4	6,2
Ամուսնու բռնությունը	0,8	6,2
Այլ պատասխան	2,4	9,3
Դժուարանում է պատասխանել	2,4	1,2

Գծապատկեր 3.- Ամուսնանալուց ինչքա՞ն ժամանակ յետոյ է մեկնել արտագնայ աշխատանքի (%)



Աղիւսակ 4.- Արտաքնացների եւ չարտագնացների ծանօթութեան ժամկէտերը կնոջ/ամուսնու հետ մինչեւ ամուսնութիւնը (%)							
Վերջին 5 տտ. արտագնացութիւն	Տարիք	Որքա՞ն ժամանակ էք ծանօթ եղել/հանդիպել Ձեր կնոջ/ամուսնու հետ մինչեւ ամուսնութիւնը					
		ծանօթ չեմ եղել կամ ընդամէնը 1 շաբաթ	1 շաբաթից 1 ամիս	2-6 ամիս	7-12 ամիս	1-3 տարի	4 տ. եւ աւելի
		14,3	0,0	0,0	0,0	37,5	0,0
	30-49	28,6	60,0	83,3	75,0	37,5	40,0
	50 եւ բարձր	57,1	40,0	16,7	25,0	25,0	60,0
	Ընդ.	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Երբեք չի մեկնել	18-29	6,3	25,8	9,1	8,7	14,3	0,0
	30-49	32,8	25,8	53,0	34,8	36,5	38,7
	50 եւ բարձր	60,9	48,4	37,9	56,5	49,2	61,3
	Ընդ.	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Գծապատկեր 4.- Աշխատանքային արտագնացի գտնուելու վայրը երեխայի ծնուելու, դպրոցը աւարտելու, նշանուելու, ամուսնանալու ժամանակ (%)



Ըստ գծապատկեր 4ի՝ առաջին կամ երկրորդ երեխայի ծննդեան ընթացքում պանդուխտների համապատասխանաբար 7,9%ը եղել է արտագնայ աշխատանքի վայրում՝ բացակայելով ընտանիքի համար նման կարեւոր իրադարձութիւնից: Տեղում չլինելու պատճառով նոյնչափ պանդուխտներ էլ ականատես չեն եղել երեխաների դպրոցի աւարտական արարողութիւններին, որը եւս նշանակալից փուլ է:

Պանդուխտների 2,4%ը չի մասնակցել նաեւ զաւակների նշանադրութեանը, իսկ 1,2%ը՝ ամուսնութեանը: Ընտանիքում տեղի ունեցած կարեւոր այդ հարցերն ընտանիքի անդամները յաճախ «սկայպի» կամ հեռախօսի միջոցով խորհրդակցել եւ համաձայնեցրել են պանդխտի հետ: Այս դէպքում հայրը, ճիշտ է, տնտեսապէս ապահովում եւ հոգում է ընտանիքի անդամների նիւթական խնդիրները, սակայն նշուած ցուցանիշերը փաստում են, որ ներընտանեկան յարաբերութիւններում նրանք չեն կարողանում կատարել մի շարք այլ կարեւոր դերեր եւ պարտականութիւններ: Երեխաների հասունութեան կենսափուլում պանդուխտների մի մասը, լինելով ընտանիքից հեռու՝ արտագնայ աշխատանքի վայրում, նրանց երբեմն տարիներ շարունակ չի տեսնում. «*Մենք գիւղում ունենք մարդիկ, որոնց երեխաները ծնուել են այստեղ, բայց նրանք արտագնացութեան պատճառով տարիներով իրենց երեխաներին, թոռներին չեն տեսել*» (կին, 50 տ., գ. Ազատան)[53]:

Այսպիսով, արտագնայ աշխատանքի մօտ ընտանիքի ձեւաւորման կենսափուլերի առանձնայատկութիւնները որոշ ընտանիքներում վերածւում է ամուսնալուծութիւնների տարածման կարեւոր գործօնի: Հետազօտութեան արդիւնքներով նրանց մօտ տարածուած են ամուսնալուծութեան միքանի ձեւեր.-

Ա) ամուսնալուծութիւններ, որոնք իրաւական ձեւակերպում են ստացել եւ վաւերացուել Քաղաքացիական Ծառայութեան ակտերի գրանցման բաժիններում: Ելնելով տնտեսական գործօնից եւ հասարակական կարծիքի ազդեցութիւնից՝ կանայք հիմնականում չեն դիմում ապահարզանի: Հասարակական գիտակցութեան հարթակում տղամարդկանց այդպիսի վարքագիծը կարծես համարւում է թոյլատրելի: Մինչդեռ ամուսնու բացակայութեան ժամանակ կնոջ նման վարքագծի դէպքում տղամարդն անմիջականօրէն նախաձեռնում է ամուսնալուծութեան գործընթաց, կամ լքում ընտանիքը: Բացի դրանից, որոշ արտագնայ ընտանիքներում, երբ տղամարդը լքում է, հարսները երեխաների հետ շարունակում են ապրել սկեսուրի եւ սկեսրայրի հետ. «*Մեր գիւղում կան ընտանիքներ, որոնք այնքան էլ համերաշխ չեն, կամ ամուսինը նոր ընտանիք է կազմել ՌԴում, հարսները չեն բաժանւում եւ շարունակում են մնալ սկեսուրի, սկեսրոջ հետ, քանի որ նրանք գնալու տեղ չունեն, ընդունուած չէ, որ վերադառնան հայրական տուն: Բացի դրանից, աշխատանք չունեն, որ երեխաներին կարողանան պահել, ծնողները ոնց ասում են, այդպէս էլ անում են*» (կին, 60 տ., գ. Ազատան)[54]:

Բ) ձեւական ամուսնալուծութիւններ, որոնք կրում են զուտ փաստաթղթային բնոյթ. ընտանիքի անդամների համաձայնութեամբ պանդուխտը ՀՀում ձեւակերպում է կեղծ ամուսնալուծութիւն, իսկ ՌԴում կեղծ ամուսնութիւն՝ այնտեղ դիւրացուած կարգով գրանցում կամ քաղաքացիութիւն ստանալու նպատակով: Այսպէս, քաղաքացիական

կացութեան ակտերի գրանցման Իջեւանի բաժնի վարիչ Ռ. Կարապետեանի տուեալներով՝ 2011ին գրանցուել է 26 ամուսնալուծութիւն, որի մէկ-երրորդը՝ պանդխտութեան պատճառով: Հետազօտութեան արդիւնքներով՝ այդ բաժանութիւնների զգալի մասը նաեւ զուտ «փաստաթղթային ձեւակերպումների» արդիւնք է. այստեղ ճանաչում են երեխայի հայրութիւնը, իսկ ՌԴում ձեւակերպում են կեղծ ամուսնութիւն՝ դիւրին կարգավիճակ ստանալու համար: Ըստ Կարապետեանի դիտարկումների՝ միայն 2012 Յունիսի տուեալներով «*կար 12 դիմում ամուսնալուծութեան համար, բայց 3 դէպք է, որ համապատասխանում է իրականութեանը: Մնացածը փաստաթղթային է, քանի որ ՌԴում ուզում են կարգավիճակ ձեռք բերել*» (կին, 41 տ., Իջեւան)[55]:

Գ) իրաւական ձեւակերպում չստացած, սակայն փաստացի ամուսնալուծուած կամ տղամարդու կողմից լքուած ընտանիքներ, որոնք պանդխտութեան հետեւանքով վերջին տարիներին լայն տարածում են ստացել ՀՀ տարբեր մարզերում: Այդ ընտանիքներում սահմանափակ են պանդխտի շփումներն ընտանիքի անդամների հետ, պանդուխտը դադարում է էական դեր կատարել երեխաների ընկերային զարգացման, կենսափորձի փոխանակման եւ դաստիարակութեան, ընկերային պաշտպանուածութեան եւ այլ կարեւոր գործառոյթներում: Պանդուխտն ընտանիքին երբեմն ցուցաբերում է զուտ դրամական աջակցութիւն, յատկապէս երբ առկայ են երեխաներ[56]:

Ամուսնալուծութեան փաստի նկատմամբ պանդուխտների ընտանիքների վերաբերմունքը միանշանակ չէ: Նրանց 63.5%ը դէմ է արտայայտուել, յատկապէս եթէ ընտանիքում կան երեխաներ: Միայն 27.8%ն է, որ ամուսնալուծութիւնը համարել է ընդունելի, երբ զոյգերը երջանիկ չեն, եւ անգամ ընտանիքում երեխաներ կան[57]:

Այսպիսով, պանդխտութիւնը թէ՛ նախախորհրդային, թէ՛ խորհրդային եւ թէ՛ յետխորհրդային փուլում իր ազդեցութիւնն է թողել ներընտանեկան եւ թողնում է յարաբերութիւնների վրայ՝ դառնալով ՀՀում անկայուն եւ ամուսնալուծուած ընտանիքների տարածման կարեւոր պատճառ: Մեր օրերում արտագնայ աշխատանքի հետեւանքով ամուսնու երկարատեւ բացակայութիւնը նրանց մօտ խախտում է ընտանիքի կենսափուլերի բնականոն յաջորդականութիւնը, այն է՝ զոյգերի փոխադարձ յարմարեցումը, սահմանափակում է նրա դերը երեխաների ընկերային զարգացման, դաստիարակութեան գործում՝ առաջ բերելով մի շարք բարոյահոգեբանական խնդիրներ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] «Արտագնացութիւն» նշանակում է ուրիշ տեղ գնացող, իր մշտական վայրից այլ տեղ մեկնող, այլ տեղում աշխատանք կատարող, աշխատելու նպատակով

տեղից տեղ գնացող (Էդ. Աղայեան, *Արդի Հայերէնի Բացատրական Բառարան*, «Հայաստան» Հրատ., Երեւան, 1976, էջ 1178):

[2] Նախախորհրդային շրջանի մամուլում եւ գրականութիւնում այդ անձանց նկատմամբ օգտագործւում էր «պանդուխտ» եզրոյթը, իսկ գործընթացն անուանում էին պանդխտութիւն՝ վտարանդի, օտարական, գաղթական, հայրենի երկրից հեռացած եւ օտար երկրում/ներում ապրող իմաստով: Օտար երկրում հարազատ ունեցող մարդկանց անուանում էին պանդուխտատէր (Աղայեան, էջ 1178):

[3] Միքայէլ Նալբանդեան, *Երկեր, Հտր. 4*, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1983, էջ 64:

[4] *Обзор Эриванской Губернии за 1908г.* (Երեւանի նահանգը 1908ին), Երեւան, 1909, էջ 8. նաեւ՝ Ա. Համբարեան, «Արեւելեան Հայաստանի Գիւղացիութեան Արտագնացութեան Մասին», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1985:8, էջ 26:

[5] Ա. Յովհաննիսեան, *Նալբանդեանը եւ Նրա Ժամանակը, Հտր. 1*, Երեւան, Հայպետհրատ, 1955, էջ 229-30:

[6] ՀՍՍՀ ԳԱ Գրականութեան եւ Արուեստի Ինստիտուտի Թ. Ազատեանի արխիւ, գ. 40, թ. 6, գ. 57, թ. 87, գ. 59, թ. 7:

[7] Բաֆֆի, *Տաճկահայք*, «Մխիթարեանների տպարան», Վիեննա, 1913, էջ 81:

[8] «Նամակ Կ. Պոլսից, Պանդխտութեան Հոսանքը», *Արծագանք*, 1887:18, էջ 269:

[9] Ե. Լալայեան, «Վասպուրական, Վան, Տոսպ եւ Հայոց-Ձոր», *Ազգագրական Հանդէս*, էլեկտրաշարժ տպ. Ն. Աղանեանի, Թիֆլիս, 1910, N 2, գիրք 20, էջ 118-9:

[10] «Հայաստանցիների Գաղթականութիւն եւ Պանդխտութիւն», *Մշակ*, 1877:61:

[11] Ն. Քարամեան, «Ծալկա. Երեք Օր Գաղթական Հայ Գիւղացիների Շրջանում», *Արծագանք*, 1894:89:

[12] Նոյն, N 90:

[13] *Հայ Ժողովրդական Պանդխտութեան Երգեր*, կազմ., ներած. եւ ծանօթ.՝ Մ. Մկրտչեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1961, էջ 15-16:

[14] Նոյն, էջ 13:

[15] Ե. Լալայեան, «Բորչալուի Գաւառ», *Ազգագրական Հանդէս*, Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1903, գիրք X, ութերորդ տարի, էջ 66:

[16] *Հայ Ժողովրդական Պանդխտութեան Երգեր*, էջ 67:

[17] «Ազգագրական Նիւթեր Յ. Մուրեադյանցի. Համշէնցի Հայերը», *Ազգագրական Հանդէս, Գիրք Ե, N 1*, 1899, էջ 377:

[18] Ս. Յակոբեանց, «Պանդխտութիւնը Գանձակի Գաւառում», *Մշակ*, Թիֆլիս, 1899:119:

[19] «Նամակ Հին Գաւառից Նախջեւանի», *Մշակ*, Թիֆլիս, 1900:45:

[20] Նալբանդեան, էջ 65:

[21] Նոյն:

[22] Գ. Սրուանձտեանց, «Մշեցի Հայոց Նոր Տարին», *Երկեր, Հտր. 2*, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1982, էջ 89:

[23] Ե. Լալայեան, «Վարանդա», *Ազգագրական Հանդէս, Գիրք Բ*, էջ 164-65:

[24] Նոյն:

[25] Ե. Լալայեան, *Բորչալուի Գաւառ, Գիրք Բ*, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, Թիֆլիս, 1897, էջ 126:

[26] Ե. Լալայեան, «Ջաւախք», *Գիրք Ա, Ազգագրական Հանդէս*, տպարան Ա. Մահտեսի Յակոբեանց, Շուշի, 1895, էջ 174:

[27] Ե. Լալայեան, «Բուլանըխ Կամ Հարք Գաւառ», *Ազգագրական Հանդէս, N 1, Գիրք Ե*, տպարան Մ. Դ. Ոստինեանցի, Թիֆլիս, 1899, էջ 149:

[28] Ժողովրդի շրջանում յաճախ օգտագործում է «արտագնացութիւնը» (Աղայեան, էջ 1178): Գեղարքունիքում եւ Շիրակում այդ գործընթացի մասնակիցներին անուանում են *խոպանչիներ*, իսկ Տաւուշում՝ *խոպանիստ*: Այդ եզրոյթի ծագումնաբանութիւնը կապուած է Հայրենական մեծ պատերազմից յետոյ՝ 1950-60ականներին, Ղազախստանում, Սիբիրում, Պովոլժիէում, Ուրալում եւ նախկին ԽՍՀՄ տարբեր շրջաններում խոպան, անմշակ հողերի իւրացման հետ, որի վերաբերեալ 1954ին ՍՄԿԿ ԿԿ նստաշրջանը ընդունել է որոշում: Այն ռուսերէն целина բառի թարգմանութիւնն է (http://www.agrotrek.ua/osvoenie-tselini.html (ընթերցուել է 06.04.2016ին)) Խորհրդային եւ յետխորհրդային շրջանի համար կ'օգտագործուեն աշխատանքային տեղաշարժեր եւ արտագնացութիւն եզրոյթները, որոնք ունեն նոյն բովանդակութիւնը:

[29] Հայկական ՍՍՀ Հոկտեմբերեան Յեղափոխութեան եւ Սոցիալիստական Շինարարութեան Պատ. Կենտ. Արխիւ (ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 123, գ. 42, գ. 38, թ. 14:

[30] *Խորհրդային Հայաստան: Հինգ Տարի (1920-1925)*, Երեւան, ՀԽՍՀ կենտգործկոմ եւ ժողկոմխորհ 1926, էջ 112:

[31] "Проблемы генерального плана Армении," *Экономический Вестник ССР Армении*, («Հայաստանի գլխաւոր նախագծի հիմնախնդիրները», Հայկական ԽՍՀ-ի տնտեսական լրաբեր), 1927:1, էջ 14-15:

[32] Ю.В. Арутюнян, Коллективизация сельского хозяйства и высвобождение рабочей силы для промышленности/ Формирование и развитие Советского рабочего класса (1917-1961) (Եռ. Վ. Յարութիւնեան, Գիւղատնտեսութեան կոլեկտիւացումը եւ բանուորական ուժի ազատելը արդիւնաբերութեան համար/Խորհրդային բանուոր դասակարգի ձեւաւորումը եւ զարգացումը (1917-1961), Մոսկուա, 1964, էջ 108:

[33] "Об Отходничестве ... Постановления Центрального Исполнительного Комитета и Совета Народных Комиссаров от 30 июня 1931г.," *Собр. Законов и Распоряжений Рабоче-Крестьянского Правительства СССР*, («Արտագնացութեան մասին... Կենտրոնական Գործադիր Կոմիտէի եւ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. Յունիսի 30ի որոշումը», *Օրէնքների ժողովածու եւ ԽՍՀՄ բանուորա-գիւղացիական կառավարութեան հրամանագիրը, մաս 1*), отд. 1, 1931, N42, էջ 286:

[34] Арутюнян, էջ 110:

[35] *Խոպան Ու Խամ Հողերի Իւրացման Հաշուին 1954-55ին Հացահատիկի Արտադրութիւնն Աւելացնելու Մասին*, Երեւան, Հայպետհրատ, 1954, էջ 24:

[36] "Об Упорядочении Отходничества Колхозов на Сезонные Работы. Постановление Совета Министров СССР от 19 июня 1973г, N421," *Собрание Постановлений Правительства СССР 1973, N15*, («Արտագնացութեան համակարգումը կոլտնտեսութիւններում եղանակային աշխատանքների ընթացքում. ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1973 թ. Յունիսի 19ի №421 որոշումը», ԽՍՀՄ կառավարութեան 1973, №15 որոշումների ժողովածու, էջ 84):

[37] «О полноте учета миграции населения Армянской ССР в 1983 г» («Հայկական ԽՍՀ բնակչութեան 1983 թ. գաղթի լիարժէքության մասին»), Հայկական ՍՍՀ Կենտրոնական Վիճակագրական Վարչութիւն, 19.01.1984, N 12-11-1:

[38] Մ. Գալստեան, Դաշտային ազգագրական նիւթեր (ԴԱՆ), Մարտունու շրջան, 1987: Այս եւ յօդուածում նշած մեր ազգագրական նիւթերը գտնւում են ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի Էթնօսոցիոլոգիայի արխիւում:

[39] Նոյն:

[40] Մ. Գալստեան, ԴԱՆ, Կամոյի շրջան, գ. Սարուխան, 1988:

[41] Մ. Գալստեան, ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2005:

[42] Մ. Գալստեան, ԴԱՆ, Արթիկի շրջան, գ. Ազատան, 1989:

[43] M.A. Шабанова, "Сезонные Строители в Сибирском Селе," *Известия АН СССР Сибирского Отделения, Серия Экономика и Прикладное Социологии* (Մ. Շաբանովա, Ժամանակաւոր շինարարները սիբիրեան գիւղերում, ԽՍՍՀ ԳԱ սիբիրեան բաժանմունք, տնտեսութիւն եւ կիրառական ընկերաբանութեան) պրակ N 7, թողարկում 2, 1986, էջ 49-51:

[44] Մ. Գալստեան, Արտագնացութիւնը Հայաստանում (XIX Դարի Երկրորդ Կէս-XX Դարի 80ական Թուականներ), ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Երեւան, 2008, էջ 71:

[45] Տե՛ս՝ «Սահմանահատումների Թիւը Ըստ Փոխադրամիջոցների 2015թ Եւ 2016թ.», http://www.smsmta.am/?menu_id=19 (ընթերցուել է 03.12.2019ին):

[46] Էթնօսոցիոլոգիական հարցախոցը կատարուել է 2016-17ին Երեւան քաղաքում եւ Շիրակի, Լոռու, Գեղաքունիքի, Սիւնիքի, Արմաւիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային եւ քսան գիւղական բնակավայրերի 384 ընտանիքներում: Հինգ տարուայ կտրուածքով (2013-17) այդ ընտանիքներից 126ը (32.8%) ուէին պանդուխտներ: Այդ ընտանիքների 69,8%ից արտագնայ աշխատանքի էր մեկնել մէկ, 25.4%ից՝ երկու, 4%ից՝ երեք, 0.8%ից՝ չորս պանդուխտ (Մ. Գալստեան, Ռ. Օհանջանեան, Թ. Զաքարեան, Գ. Յակոբեան, *Արդի Հայ Ընտանիքը Փոխակերպուող Հասարակութիւնում*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Երեւան, 2017):

[47] «Հայաստանի Սոցիալական Պատկերը եւ Աղքատութիւնը, 2019», http://www.armstat.am/am/?nid=82&id=1718 (ընթերցուել է 15.07.16ին):

[48] Միգրացիան եւ Զարգացումը. Հայաստանում Առկայ Իրավիճակի Ուսումնասիրութիւն, Աշխատանքի միջազգային կազմակերպութիւն, 2009, էջ 12-13: http://employment.am/up/attach/attach_arm10.pdf (ընթերցուել է 01.06.2020ին):

[49] Всероссийская перепись населения, Национальный состав населения 2010, http://www.gks.ru/free_doc/new_site/perepis2010/croc/perepis_itogi1612 (Բնակչութեան համամիութենական մարդահամար, բնակչութեան ազգային կազմը 2010, http://www.gks.ru/free_doc/new_site/perepis2010/croc/perepis_itogi1612 (ընթերցուել է 12.02.16ին):

[50] «Հայաստանի Ժողովրդագրական Ժողովածու, 2018», https://www.armstat.am/file/article/ demog_ 2018_6.pdf (ընթերցուել է 06.09.2019ին):

[51] Ա. Կրաւչենկո, *Սոցիոլոգիա*, «Զանգակ-97» Հրատ., Երեւան, 2004, էջ 239-40:

[52] Երբ արտերկրում գտնուող տղան կամ աղջիկը համացանցի միջոցով ծանօթանում են տեղի կամ Հայաստանի իրենց հայրենակիցների ու համագիւղացիների հետ, որոշ ժամանակ կարծական կապով ընկերութիւն անելուց յետոյ հանդիպում են եւ միմեանց հաւանելու պարագայում ամուսնանում:

[53] Մ. Գալստեան, ԴԱՆ, Շիրակի մարզ, 2007:

[54] Նոյն:

[55] Մ. Գալստեան, ԴԱՆ, Տաւուշի մարզ, 2011:

[56] Գալստեան, Օհանջանեան, Զաքարեան, Յակոբեան, էջ 224-25:

[57] Մ. Գալստեան, «Ամուսնալուծութիւնները Աշխատանքային Միգրանտների Շրջանում», *Շիրակի Պատրիարքական Ժառանգութիւնը. Հայագիտութեան Արդի Հիմնահարցերը» 10րդ Միջազգային Գիտաժողով*, 27-29 Սեպտեմբերի 2019, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Գիւմրի, էջ 249-51:

MIGRATION ISSUES IN ARMENIA (PAST AND PRESENT)

(Summary)

MIHRAN GALSTYAN
akoonk@yahoo.com

The article discusses the impact of late 19th century, Soviet and post-Soviet emigration on Armenian families. It is based on archival materials, press coverage and analyses, and statistical data as well as ethnographic field work conducted by the author.

The author notes that during the second half of the 19th century emigrants of Western Armenia left mainly for Constantinople, where their number reached up to 50-60,000. On the other hand emigrants of Eastern Armenia left mainly for the major industrial centers of Transcaucasia and Russia like Baku, Tiflis, Elizavetpol, etc. The author argues that emigration had a negative socio-psychological impact on families and family relationships and cites Yervant Lalayan's claim that it contributed to the collapse of the patriarchal family and the formation of small families.

Soviet rule in Armenia brought huge changes to human socioeconomic and political relations and marked a shift in the nature, content, forms, direction and consequences of labor migration on family relations and family construct. Out of a total population of 3,218,400 an estimated 24,931 migrant workers had left Soviet Armenia in 1983.

In the post-Soviet period massive emigration took place from the Republic of Armenia and reached 40-50,000 annually. In his analysis, the author assesses emigration as a disruptor of the normal life cycle and sequence of family life, a hindrance to spouses' reciprocal adaptation, and a source of the development of family conflicts and divorce, due to a short, insufficient pre-marital acquaintance period, absence of the father figure from the newly formed family immediately after marriage, living apart immediately after the birth of the first/second child and the decrease of the father's role in socializing and educating the children, leading to a number of socio-psychological problems within the family.

The author concludes that during both pre-Soviet, Soviet and post-Soviet times emigration had a significant impact on family relations and was a critical factor leading to the increase in the number of unstable families and divorces in Armenia.